

---

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹ

ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ:

---

## **Բովանդակություն**

1. «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության մասին.....	3
2. Ծրագրի մասին.....	4
3. Իջևան քաղաքի աշխատանքային խմբի քննարկումներ.....	4
4. Առաջարկներ.....	7
5. Աշխատանքային խմբի անդամներ.....	9

## **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Քաղաքական երկխոսություն» կազմակերպությունը հիմնադրվել է 2018 թվականին՝ Թավշյա հեղափոխությունից հետո՝ նպատակ ունենալով ուղղել հասարակության մեջ կուտակված քաղաքական էներգիան Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարացմանը ու մարդու իրավունքների պաշտպանությանը: Համոզված ենք, որ ամուր ժողովրդավարության համար քաղաքացիական հասարակությունը, քաղաքական ուժերը և պետական կառավարման մարմինները պետք է սերտ համագործակցեն և երկխոսեն:

## **ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

Մեր առաքելությունն է նպաստել քաղաքացիների հետևողական մասնակցությանը քաղաքական գործընթացներին, ինչի շնորհիվ հնարավոր կլինի հասարակության մեջ արմատավորել հաշվետու կառավարման և գիտակից որոշումների կայացման արժեքները:

## **ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

1. Նորարարական միջոցներով Հայաստանում ձևավորել գաղափարահեն քաղաքական դիսկուրս՝ հասարակության ակտիվ շերտերի, քաղաքական ուժերի և պետական ինստիտուտների միջև:
2. Զարգացնել քաղաքացիական հասարակության և քաղաքական ուժերի միջև երկխոսության հարթակը:
3. Քաղաքականությունը մոտեցնել քաղաքացուն՝ այն ավելի մատչելի դարձնելով:
4. Նպաստել ժողովրդավարական մեխանիզմների իրացմանը՝ հանրային շահի լոբբինգի միջոցով:

## **ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

«Քաղաքականությունը ավելի մոտ քաղաքացուն» ծրագրի նպատակն է նպաստել ներքնից վերև ժողովրդավարության իրացմանը՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների պոտենցիալի օգտագործմամբ: «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության նախաձեռնությամբ ՀՀ հինգ մարզերում կազմակերպվում են աշխատանքային քննարկումներ մարզերում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների և ակտիվ քաղաքացիների մասնակցությամբ:

Քննարկումների ընթացքում՝ ձևավորված աշխատանքային խումբը վեր է հանում մի շարք խնդիրներ և կոնսենսուսային սկզբունքով ընտրում մարզին հատուկ մեկ խնդիր: Այնուհետև, աշխատանքային քննարկումների արդյունքում մշակվում է այդ խնդրի լուծման առաջարկությունների փաթեթը: Փաթեթի մշակումից հետո մարզում կազմակերպված հանդիպման ընթացքում այն ներկայացվում է տեղական ինքնակառավարման մարմիններին, գործադիրի համապատասխան գերատեսչություններին, ԱԺ պատգամավորներին, ՋԼՄ ներկայացուցիչներին:

Վերջնական փաթեթը կազմելուց հետո «Քաղաքական երկխոսություն»-ը հետամուտ է լինելու խնդրի լուծմանը նպաստելուն:

Ծրագիրը իրականացվում է Նիդերլանդների Թագավորության արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ:

## **ԻՋևԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ**

«Քաղաքական երկխոսություն» կազմակերպության մարզային ծրագրի շրջանակներում Տավուշի մարզի Իջևան քաղաքում 2019թ. հոկտեմբերի 31-ին կազմակերպվել էր աշխատանքային քննարկում՝ մարզի ակտիվ քաղաքացիների և մարզում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Կազմակերպությունը քննարկումներում ներգրավվել է հասարակության տարբեր ոլորտների ներկայացուցիչների՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ուսանողներ,

դպրոցականներ, անհատ ձեռներեցներ: Աշխատանքային խմբի մասնակիցների մեծամասնությունը Իջևան քաղաքի բնակիչներ են: Քննարկման ընթացքում բարձրաձայնվել են մարզին հատուկ մի շարք խնդիրներ, սակայն առաջնորդվելով խնդրի լուծելիության և կարևորության սկզբունքներով առաջնահերթություն է տրվել մարզին հատուկ մի քանի խնդիրների: Հանդիպման ընթացքում, ինչպես նաև աշխատանքային խմբի հետագա աշխատանքի ընթացքում, կոնսենսուսային սկզբունքով ընտրվել է մարզին հատուկ ներքոնշյալ խնդիրը՝

### **Իջևանի քաղաքային զբոսայգու հիմնախնդիրներ**

Իջևանի քանդակների այգին գտնվում է Աղստև գետի մոտ, որտեղ 1985-1991թթ. արվեստաբան Սարո Սարուխանյանի և Ջեմմա Անանյանի նախաձեռնությամբ տեղի էր ունենում ամենամյա քանդակի սիմպոզիում, որին մասնակցում էին թե՛ տեղի, թե՛ աշխարհի տարբեր անկյուններից եկած քանդակագործներ: Այգում տեղադրված քանդակներից յուրաքանչյուրն ունի իր պատմությունը: Նախկինում այգում տեղի է ունեցել մի քանի դեպք, երբ վնասվել և ջարդվել են որոշ արձաններ:

Զբոսայգու հիմնախնդիրները բազմիցս եղել են տարբեր [ԶԼՄ-ների ուշադրության կենտրոնում](#): 2010թ.-ին Կառավարությունը հավանություն էր տվել քանդակի իջևանյան սիմպոզիումի վերականգնման [ծրագիր-առաջարկին](#)՝ հիմնավորելով, որ Տավուշի մարզկենտրոն Իջևանի հոգևոր ժառանգության արժևորումը՝ կրթի նոր ճանաչում և կստեղծի ներդրումային կայուն միջավայր ունենալու հնարավորություն: Կառավարության արտագնա նիստի վերոնշյալ որոշումը չի իրականացվել: Միաժամանակ, հարկ է նշել, որ 2013թ.-ին Իջևանում բացվեց Իջևանի արվեստի փառատունը, որը 1985-1991թթ. մարզկենտրոնում կայացած քանդակի միջազգային սիմպոզիումի շարունակությունն է:

Աշխատանքային խմբի մասնակիցները պնդում են, որ նախկինում հասարակական կազմակերպություններն ու ակտիվ քաղաքացիները բարձրաձայնել են տվյալ խնդիրները և փորձել գտնել այդ խնդիրների լուծումները:

Պետք է նշել, որ Իջևանի զբոսայգու խնդիրները մշտապես եղել են Եվրասիա համագործակցության հիմնադրամի հյուսիսային մասնաճյուղի (ԵՀՀ ՀՄ) ուշադրության

կենտրոնում: ԵՀՀ ՀՄ իրականացրել է մի շարք մեծ ու փոքր նախաձեռնություններ այգին պահպանելու, այն հանրության համար որպես կարևոր արժեք ձևավորելու, ինչպես նաև այգին որպես մշակութային կյանքի և տուրիզմի զարգացմանը ծառայեցնելու նպատակով:

ԵՀՀ ՀՄ-ն նախաձեռնել է է [Facebook](#) սոցիալական ցանցում այգու անունով էջ բացելը, որտեղ էլ սկսել են հավաքագրել և հրապարակել քանդակների և այգու հետ կապված տեղեկություններ, պատմություններ ու լուսանկարներ: Էջի նպատակն է մարդկանց ուշադրությունը հրավիրել քաղաքի մշակութային արժեք հանդիսացող քանդակներին, խրախուսել մարդկանց կողմից հասարակական վայրերը խնամքով պահպանելու և այգին այցելուների համար առավել գրավիչ վայր դարձնելուն:

Կազմակերպության կամավորները այգում կազմակերպել են [շաբաթօրյակ](#) և պարբերաբար գրում են [հոդվածներ](#): Այս շաբաթօրյակները կրում են պարբերական բնույթ:

Վերջերս Իջևան Ինֆոտան կամավորները հավաքել են այգու 17 քանդակների մասին պատմող տեղեկություններ, թարգմանել դրանք անգլերեն, և ստեղծել QR կոդեր: Այժմ այս կոդերը պատրաստ են տպագրության, սակայն կոդերի հետ միասին անհրաժեշտ է, որ այգում լինի WiFi ծածկողականություն:

ԵՀՀ ՀՄ կամավորներ Վահագն Մայիլյանն ու [Մարիամ Էվանեսյանը](#) այգում իրականացնում են շրջայց՝ այցելուներին ծանոթացնում այգու պատմությանն ու քանդակների հետ: Շրջայցն իրականացվում է ինչպես հայերեն այնպես էլ անգլերեն:

2018թ.-ի օգոստոսի 12-ին երբ Իջևանում նշվում էր երիտասարդության միջազգային օրը ԵՀՀ ՀՄ-ի առաջարկությամբ միջոցառումների պաշտոնական բացումն ու միջոցառումների մեծ մասն կազմակերպվել են Քանդակների այգում:

Նույն կերպ 2019թ.-ին Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում այգում կազմակերպվեց հանրային քննարկում: Սա նոր մշակույթ է Իջևան քաղաքում:

Բնակիչների և զբոսաշրջիկների համար այգին ավելի գրավիչ դարձնելու համար հարկավոր է վերացնել **ներքոնշյալ խնդիրները**: Աշխատանքային խմբի մասնակիցները որպես խնդիր մատնանշում են՝

- Այգու ջարդված և անբարեկարգ արձանները, օրինակ Բենիկ Պետրոսյանի «Երկխոսություն» քանդակը, «Եվան և օձը», «Զարթոնք» քանդակները

- Քանդակների մասին տեղեկատվական ցուցանակների պակաս

- Արձանները չունեն անհրաժեշտ, մշտական մասնագիտական խնամք

- Այգին չունի պահակ

- Այգին չունի հստակ անվանում՝ որը ամբողջությամբ կփոխանցի այգու բովանդակությունը և նշանակությունը և քաղաքացիների համար կլինի հեշտ նույնականացվող:

Աշխատաքնային խմբի մասնակիցները կարծում են, որ վերոնշյալ հիմնախնդիրները ուղղակիորեն կապված են այգու հանրայնացման և արժևորման հետ: Ինչպես նաև, նրանք առանձնակիորեն կարևորում են այգու դերը քաղաքի բրենդի և իմիջի ձևավորման հարցում:

Վերոնշյալ խնդիրների լուծման համար Իջևանի աշխատանքային խումբը մշակել է հետևյալ **առաջարկությունները**, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ այգու բարեկարգման առաջարկներ և քանդակների վերականգնման առաջարկներ:

### **Այգու բարեկարգման համար աշխատանքային խումբը առաջարկում է**

- Կազմակերպել կլոր-սեղան քննարկում, որին կմասնակցեն համայնքապետարանի և ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչները՝ քննարկելու քաղաքային զբոսայգու խնդիրները

- Քննարկել այգու անվանափոխման հարցը: Իջևանի քանդակների այգին, որը նաև անվանվում է քաղաքային զբոսայգի, քանի որ այդտեղ են գտնվում նաև «Վերնատուն» պատկերասրահն ու քաղաքային լճակը, ունի բոլոր նախադրյալները դառնալու Իջևանի այցեքարտը: Այգին անվանակոչելը կարող է այն ավելի ճանաչելի դարձնել:

- Այգու տուրիստական ներուժի մասին բնակիչների և տուրիստների շրջանակներում իրազեկվածության բարձրացում՝ այգում տարբեր միջոցառումներ, ցուցահանդեսներ, թատրոններ կազմակերպելով

- Այգում տեսախցիկի տեղադրում

- Անհրաժեշտ է, որ այգին ունենա մշտական պահակ կամ պահակ-այգեպան
- Ապահովել այգու տարածքը անվճար WI FI կապով
- «Զրուցող այգի» ձեւաչափի ներդրում, որտեղ հատուկ վահանակները կպատմեն այգու, արձանների, քաղաքի մասին:

**Քանդակների վերականգնման և պահպանման համար աշխատանքային խումբը առաջարկում է**

- Պարզեցնել քանդակների վերականգնման նախագիծը (կցում ենք քանդակների վերականգնման նախագիծն ու ակտը):
- Տրամադրել քանդակների վերականգնման համար համապատասխան նյութեր և տեխնիկա
- Այգու քանդակների համար ապահովել մասնագիտական խնամք

Աշխատանքային խմբի կողմից բարձրաձայնված խնդիրների և առաջարկությունների հասցեատերերը հանդիսանում են՝ **Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը** և **Իջևանի համայնքապետարանը**:



## Իջևան քաղաքի աշխատանքային խմբի անդամներ`

Վարսիկ Ներկարարյան, Եվրասիա համագործակցության հիմնադրամ ՀՄ

Էմիլյա Ոսկանյան, Եվրասիա համագործակցության հիմնադրամ ՀՄ

Նարինե Չուխուրյան, Տավուշի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն

Արտյոմ Դալյան, անհատ

Արմինե Ներսիսյան, Հուլսի կամուրջ ՀԿ

Ֆլորա Խաչատրյան, Քաղաքացիական երիտասարդական կենտրոն ՀԿ

Մարիամ Էվանեսյան, անհատ

Աշխեն Պետրոսյան, անհատ

Աննա Բեկնազարյան, անհատ

Վարազդատ Դավիդյան, անհատ

Ռուզաննա Եզանյան, անհատ

Մոնիկա Խաչատրյան, անհատ